

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱԿՆԵՐԻ ԶԻՎԱՆԻԱԿԱՆ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԹՈՎՄԱՍ ՊՈՂՈՍՅԱՆ

Աշուղական գրականության այլաբանություններին համահունչ է առակը, և բոլոր աշուղներն էլ դիմել են առակավոր այլաբանությանը, այդ թվում՝ տարբեր առակների գրական մշակմանը: Ջիվանին ևս ունի մի քանի առակների գրական մշակումներ: Ինչպես առածի դեպքում, այնպես էլ առակի ժանրին Ջիվանու դիմելը պայմանավորված էր ոչ միայն աշուղական բանաստեղծության ավանդույթով և նրա անձնական նախասիրություններով, այլև ժամանակի գրական ընդհանուր հոսանքով: XIX դ. երկրորդ կեսից մեծ տարածում են ստանում հայ միջնադարյան առակների բնագրերի տարբեր հրատարակությունները, որոնց բարձրակետն էր դառնալու Ն. Մառի եռահատոր «Ժողովածույք առակաց Վարդանա» կապիտալ աշխատանքը¹: Միաժամանակ տարբեր առակներ են գրառվում ժողովրդական միջավայրից ու հրատարակվում ժողովրդական ստեղծագործություններ և վերջիններիս գրական մշակումները ներկայացնող գործերում:

Այս հրատարակությունների առաջաբաններում բնորոշվում է նաև առակը համապատասխան տեսական ու գրական իմաստավորմամբ: 1878 թ. Բաքվում խորեն քիչ. Միրզաբեգյանցը հրատարակում է «Գոշ Մխիթարի, Ողոմպիանու և Եզովպոսի ընտիր առակները» ժողովածուն, որում առակների գլխավոր արժանիքն է համարվում սնապարծին խրատելը, այսինքն՝ առակների ունեցած դաստիարակչական նշանակությունը: Ինչպես կազմողն է գրում. «Այն ինչ որ առակներով կարելի էր հայտնել և զգուշացնել թագավորից սկսած մինչև հետին ռամիկին (առանց որոշելու հոգևորականը աշխարհականից, որ ամենեքյան ևս կիրք ունեցող մարդիկ են) անհնարին էր հայտնել և խրատել այլապես»²:

Այս նույն տեսանկյունից են առակները արժևորվել նաև «Փունջք հատրնտիր առակաց» ժողովածուի 1-ին հատորում, որը լույս է տեսել Կ. Պոլսում 1885 թ.³:

Թիֆլիսում 1906 թ. հրատարակված «Առակներ» գրքում ևս վերջիններս այս տեսանկյունից են արժևորված. «Այլաբանորեն գրուցատրությունները կամ ուղղակի անշունչ էակներու և անբան անասուններու մտածել և խոսել տալը, բարոյախոսներու համար եղել է մի հարմար միջոց, որով ուզեցել են կենդանի օրինակներով, առավել ազդու ըմբռնել տալ

¹ Տե՛ս Н. Я. М а р р. Сборник притч Вардана, часть 2-я. СПб., 1899.

² Խո՛ր են քիչ. Միրզաբեգյանց. Գոշ Մխիթարի, Ողոմպիանու և Եզովպոսի ընտիր առակները, հ. Ա, Բաքու, 1878:

³ Փունջք հատրնտիր առակաց, հ. Ա, գրեց Տ. Լ., Կ. Պոլիս, 1885:

ճշմարտությունը և թողուլ առավել երկարատև և հրահանգիչ տպավորություն»⁴:

Այժմ ներկայացնենք առակների ջիվանիական մշակումներն ու մեկնաբանությունները՝ դրանք համեմատելով միջնադարյան առակների և նոր շրջանի այլ մշակումների համապատասխան սյուժեների հետ:

Ինչպես հայտնի է, առակը խոսքի արտահայտման մի այնպիսի ձև է, որն ասելիքը բացատրում և ներկայացնում է բերվող առանձին օրինակի միջոցով կատարված ընդհանրացմամբ: Այսպիսով՝ առակը մի պատմություն և զրույց է, որից կատարվում է համապատասխան բարոյական եզրահանգում: Պայմանավորված այս հանգամանքով՝ առակը երկմաս կառուցվածք ունի: Առաջին մասը որպես օրինակ ծառայող բուն պատմությունն է, իսկ երկրորդ մասը այդ պատմության բարոյաբանական ու այլաբանական բացատրությունը:

Զիվանին աշուղական բանաստեղծության շրջանակում աշխատել է պահել այս կառուցվածքը: Առակներին դիմելիս փորձել է հնարավորինս կրճատել սյուժետային ընթացքը, երբեմն սյուժեն ներկայացնելով միախառնված բարոյական եզրահանգմանը: Առակներին դիմելիս կատարել է երկաստիճան բարոյա-այլաբանական եզրահանգում՝ բանաստեղծական հետևյալ կառուցվածքով. առակ առակի եզրահանգում-եզրահանգման վրա խարսխված բանաստեղծության հաջորդող ընթացք: Ասվածն այժմ ներկայացնենք համապատասխան օրինակների միջոցով:

Մինևույն պատմության խրատաբացատրական մասը, թե ինչպիսի փոփոխությունների կարող է ենթարկվել հին ու անտիկ աշխարհում, ապա և քրիստոնեական միջավայրում ու հետո նոր շրջանի գրականության մեջ, երևում է աղքատի միսը այրվող կայծի հետ հափշտակող արծվի պատմությունից: Դրա եգիպտական տարբերակը վերնագրված է «Անգղը և կատուն»⁵: Ասվում է, որ եգիպտական Րա աստվածը երկնային ուժերին ուղարկում է պատժելու անգղին, որը սպանել էր կատվի ձագերին: Երկնային ուժը՝ վրեժխնդրությանը, որը նստած էր այն ծառի տակ, ուր գտնվում էր անգղի բույնը, հաղորդում է Րաի հրամանը: Վրեժխնդրությունն այնպես է անում, որ մի սիրիացի մի թռչուն խորովի: Անգղը տեսնելով միսը, մի կտոր վերցնում է և տանում իր ձագերին, չտեսնելով, որ նրա վրա շիկացած ածուխ կա: Այս ածուխից վառվում է բույնը և այրվում են անգղի ձագերը, որով և լուծվում է կատվի վրեժը:

Այս պատմությունը որպես առակ գտնվում է Եզոպոսի առակներում և կոչվում է «Արծիվն ու աղվեսը»: Այստեղ ասվում է, որ արծիվն ու աղվեսը որոշում են հաշտ ու խաղաղ ապրել, սակայն մի օր արծիվը բռնում է աղվեսի ձագերին և իր ձագերի հետ միասին ուտում: Աղվեսը անգորոշությունից կարողանում է արծիվին միայն անիծել: Շուտով, սակայն, անեծքը կատարվում է. մի մարդ այժ է բերում զոհաբերելու, և արծիվը զոհասեղանից փախցնում է այրվող փորոտիքը, որից հրդեհվում է արծվի բույնը և խանձվող ճտերը ընկնում են գետին: Նրանք չեն կարողանում թռչել, և աղվեսը արծվի աչքի առջև բոլոր ձագերին ուտում է:

⁴ Ա. Ն ա լ բ ա ն դ յ ա ն. Առակներ, Թիֆլիզ, 1906, էջ 3:

⁵ Скелу Сказки и повести древнего Египта. М., 1956, с. 144.

Առակի մեկնաբանությունում ասվում է. «Առակն ցուցանե, որ բարեկամին դավաճանողը, եթե նույնիսկ տուժածի վրեժից խուսափի, աստվածների պատժից, միննույնն է, չի խուսափի»⁶:

Հայկականը կոչվում է «Աղքատ մսախորով և արծիվ»⁷: Ասվում է, որ մի աղքատ մի քիչ միս էր խորովում անապատում: Այդ ժամանակ մի արծիվ է անակնկալ իջնում, հափշտակում և տանում: Աղքատը ընկնելով երեսի վրա, լաց լինելով՝ ասում է. «Ոչ ուտես զդա»: Համանման ձևով արծիվի տարած մսից այրվում է բույնը՝ արծիվի ձագերի հետ միասին: Խրատի մեջ ասվում է. «Ցուցանե առակս, թե որ զրկե զմարդ անմեղաց, մեղքն հետ զրկանացն ինքն առնու և այն այրե զնա ի հուրն անշեջ»: Ինչպես տեսնում ենք, մեկնաբանման մեջ այս պատմությունը անվանվում է առակ: Սակայն, ի տարբերություն եգիպտական և հունական տարբերակների, այն միանգամայն ռեալիստական բովանդակություն ունի և հրաշապատում ու կենդանական որևէ մոտիվ չկա, թեև երկու գործող դեմքերից մեկն արծիվն է: Ահա այս հանգամանքն էլ հիմք է տալիս այս պատմությունը միաժամանակ դիտարկել նաև որպես գրույց:

Հայկական տարբերակը համեմատաբար մոտ է հունականին, քանի որ վերջինում բացակայում է աստվածների վրեժխնդրության պահը: Հայկականը հունականից ու եգիպտականից, սակայն, ունի մի էական տարբերություն: Հայկականում բախումը մարդու և արծիվի միջև է, ու այս բախումը, ըստ էության, ունի սոցիալական բովանդակություն, այնինչ հունականում և եգիպտականում մարդը միջոց է, որպեսզի նրա վառած կրակով այրվի արծիվի (անգղի) բույնը: Նաև անտիկ առակում ժամանակաշրջանի ոգուն համահունչ ձևով եթե դատապարտվում է դավաճանությունը, ապա հայկականում դատապարտվում է մարդուն զրկելը և քրիստոնեական մեկնաբանությամբ ասվում է, որ աղքատին զրկողը իր բռնադատածը իր հետ որպես մեղք է տանում հանդերձյալ աշխարհ, որտեղ այն նրան այրում է որպես անշեջ հուր:

Ջիվանին այս առակն առավել իրապատում է դարձրել: Նա գրեթե փոխել է բովանդակությունը և իր գործը կառուցել առակի բարոյական եզրահանգման վրա: Ջիվանու մոտ ոչ թե արծիվն է հափշտակում աղքատի խորոված միսը, այլ այստեղ կրակ է համարվում հենց աղքատից խլված հացը, որը կրակի նման այրելու է հարուստի տունը: Ինչպես Ջիվանին է գրում.

Անիրավ մարդ, աղքատի ձեռքից հացը ու՞ր կտանիս,
Լավ իմացիր, որ քու տունդ Գեհենից հուր կ'տանիս⁸:

Ինչպես ասացինք, Ջիվանու կատարած եզրահանգումը արդեն բավական համահունչ է առակի միջնադարյան հայկական մեկնաբանությանը.

⁶ Եզոպոսի առակները, Երևան, 1972, էջ 80:

⁷ Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից, Կազմեց Կ. Մելիք-Օհանջանյանը, Երևան, 1957, էջ 9:

⁸ Ջ ի վ ա ն ի. Անհայտ էջեր, աշխ. Թ. Պողոսյանի, Երևան, 2009, էջ 141:

Դու չըզիտես խղճուկի և աղքատի տերն Աստված է,
Որբի կայքը խլելով, քեզ մահ բերող սուր կ'տանիս:

Առաջին այս տան առաջին երկու տողերը, եթե առակի պատմությունն են ներկայացնում, իսկ հաջորդ երկուսը եզրահանգումը, ապա բանաստեղծության մյուս երկու տները արդեն եզրահանգումն են՝ հիմնված առաջին տանը բերված առակի և նրա մեկնաբանման վրա: Աղքատից խլվածի, որպես պատուհասող պատժի գաղափարն է բանաստեղծական պատկերավորմամբ ընդգծվում երկրորդ տան մեջ.

Ձորավոր մարդ, թե խլում ես անգորի մեկ դրամը,
Իսկ անեծք գա, չոր, կ'լինիս դուրս կուգա կյանքիդ ժամը,
Լեղի օձի կաթ կ'դառնա քմացդ քաղցր համը,
Այնպես համարե վիշապի բերնից ջուր կտանիս:

Բանաստեղծության երրորդ տունը, որը ներկայացնում է ողջ բանաստեղծության եզրահանգումը, արդեն որպես իրեն և իր միջոցով հասարակությանն ուղղված խրատ Ջիվանին ասում է, թե որքան կարող ես բարին գործիր մինչև այն աշխարհից հրավիրաթղթի գալը:

Ինչպես որ առակների գլխավոր գործող անձը աղվեսն է՝ իր խորամանկությամբ, որի համար միջնադարյան առակագրքերը անվանվել են նաև «Աղվեսագիրք», այնպես էլ Ջիվանին է բանաստեղծական մշակման ենթարկել աղվեսի հետ կապված մի քանի առակներ, այդ թվում և նշանավոր «Աղվեսն ու ագռավը»: Անհրաժեշտ է նշել, որ նոր շրջանի թե՛ ելրոպական ու ռուսական և թե՛ հայ գրականության մեջ այն մի շարք մշակումների է ենթարկվել:

Առակի միջնադարյան տարբերակն է «Գայլագռու պանիր ի կտուցն եւ աղուէս»: Աղվեսն այստեղ ագռավին է դիմում միջնադարյան փառաբանական ոճով և ասում, որ եթե ես իմանայի, թե նա այսպիսի ձայն ունի, ապա թագավոր կօծեի: Այս խոսքերից ագռավի ինչքը գնում է, և նա պանիրը գցում է: Պանիրը վերցնելով՝ աղվեսն ասում է, թե մի պանիր չկարողացար պահել, թագավորությունն ինչպես պետք է պահեիր: Առակի բովանդակությունը միանգամայն կրոնական է և ասվում է, թե աղվեսը սատանան է, ով մեզ շարունակ խաբում է այս երկրային կյանքի ունայնությամբ և մեռցնել տալիս ու զրկում մեր ունեցած հոգևոր փառքից և շնորհից՝

«Փունջք հատրնտիր առակաց» ժողովածուի մեջ հետաքրքիր է, որ աղվեսը դարձյալ սատանա է անվանվում, իհարկե, ավելի շատ խորամանկ իմաստով.

Սատան աղուէսն որն առաւ,
Վազեց ծառին տակ եկաւ:

⁹ Н. Я. М а р р. Նշվ. աշխ., էջ 29:

Այս մշակման յուրահատկությունն այն է, որ աղվեսը ինքն է ներկայացնում առակի բարոյական խրատը.

Շողոքորթք ամեն ատեն,
Որին քիթն որ բռնեն
Կուտեն նորա բերնին որս,
Միտքդ պահե իմ աղուրս:
Այս իմ օգտակար խրատ
Պանիր կարժե երկու հատ¹⁰:

Համանման եզրահանգում է կատարվում նաև Ա. Նալբանդյանի մշակման մեջ, սակայն այն արդեն հեղինակային խրատ է, որում ասվում է.

Շողոքորթին քաղցր լեզվեն
Ըզգոյշ եղիր և ծանի՛ր,
Ձի չես ըզգար երբ քո բերնեն
Կը խլե հացն ու պանիր¹¹:

Եթե առակը միջնադարյան և նոր տարբերակներում միանգամից սկսվում էր ագռավի բարձր մի տեղում պանիրը պահելով, ապա Ջիվանին սյուժետային մի նոր զարգացում է հաղորդել, թե ինչպես քաղցած աղվեսը այստեղ ու այնտեղ ուտելիք որոնելով չի գտնում և անտառ է գնում, որտեղ տեսնում է, որ ագռավը նստել է ծառին և կտուցով միս է պահել: Եթե միջնադարյան տարբերակում ասվում էր, թե աղվեսը շողոքորթում է ագռավին, որ նրան կկարգեր թռչունների թագավոր, ապա Ջիվանու մոտ աղվեսը միանգամից այդպես է դիմում նրան.

Ասավ՝ բարև քեզ, թռչնոց թաքավոր,
Դու ես իշխանը այս մեծ անտառին,
Չկա քեզ նման խղճով մեծավոր¹²:

Աղվեսի՝ թեև որպես շողոքորթ խոսքերում, սակայն նրա գովերգման մեջ երևում է Ջիվանու բանաստեղծական վարպետությունը որպես թե մի հրեղեն հավր նկարագրելիս լինի.

Ոսկու զանգված են երկու թևերդ,
Նուրբ փետուրներդ՝ մետաքս ոսկեման,
Փայլուն աստղեր են կրակ աչգերըս,
Շանթեր արձակող մեկ-մեկ ատրուշան:

Երբ աղվեսը կույ է տալիս ագռավի նետած պատառը, հաջորդում է խրատական եզրափակումը: Եթե նախորդող դեպքերում ասվում էր, որ խորամանկները շողոքորթությամբ խլում են խաբողի ունեցածը, ապա

¹⁰ Փունջք հատրնտիր առակաց, հ. Ա, էջ 19:

¹¹ Ա. Նալբանդյանի. նշվ. աշխ., էջ 126:

¹² Աշոտի Ջիվանի. նշվ. աշխ., էջ 566:

այստեղ իմաստային մի նրբերանգով ասվում է, թե սնամիտ միամիտներն են իրենց բերանի հացը կորցնում՝ հավատ ընծայելով «պատիր գովեստին»:

Ջիվանու մոտ աղվեսին վերաբերվող հաջորդ պատմությունն ավելի շատ գրույց է, քան թե առակ: Ահա այս պատճառով այն չունի նաև խրատական եզրահանգում: Այս մշակումը նվիրված է աղվեսի ուխտավոր ձևանալով աքլորին տիրանալուն: Սույն պատմությունը, թեև ուղղակիորեն չկա «Աղվեսագրքում» և միջնադարյան առակներում, սակայն նույն այս մոտիվով մի քանի առակ-գրույցներ կան, թե ինչպես է ուխտավոր կամ բարեպաշտ հավատացյալ ձևացող աղվեսը փորձում տիրանալ աքլորին ու հավերին: Այս մոտիվը տարածված է նաև նոր շրջանի գրական մշակումներում:

Ձեռագրային սկզբնաղբյուրներից եկող գրական մի մշակում ունի Վահան վրդ. Տեր-Մինասյանը, որի վերնագիրն է՝ «Աղվես և աքլոր»: Այն ևս - հիմնված է աղվեսի կեղծ բարեպաշտության և եկեղեցական պահվածքի վրա: Չափածո պատմության սկզբում դիմելով աքլորին աղվեսն ասում է.

Վարդավառի տօն է այսօր,
Իջիր ծառէդ, սիրուն աքլոր,
Ինձ հետ կարդա երգ շարական,
Մատաղն օրհնենք տերունական¹³:

Աքլորը հասկանալով աղվեսի խորամանկությունը, ասում է, թե նախ պետք է ժամկոչի ձայնով կանչի և ձայնում է.

Կուկուլի՜ կու, տօն է այսօր,
Սուրբ Կարապետն է փառաւոր:

Աքլորի ձայնի վրա հասնում է շունը և կծում աղվեսին, ու վերջինս ցավալից ձայներ է արձակում: Ապա որպես բարոյական եզրահանգում, գալիս է աքլորի խոսքը.

Աղուէս, կասեր ծիծաղելէն,
Այդ անճոռնի ձայնով պիտի
Երգեր տօն Վարդավառի¹⁴:

Ա. Նալբանդյանի «Առակներ» վերը հիշված գործում այս նույն մոտիվով երկու բանաստեղծություն կա: Առաջինում աղվես-աքլոր-պահապան շուն եռանկյունին ներկայացվում է կեղծ բարեպաշտ աղվես-տիրացու-աքլոր-երեսփոխ - շուն հարաբերակցությամբ: Ծառին նստած աքլորը լուսաբացին փառաբանում է ծագող լույսին: Ներքևում գտնվող աղվեսն ասում է, թե երկնային մեղեդիներ ես երգում, իջիր և բացիր եկեղեցու դուռը: Աքլորն ասում է, թե գնա և բեր եկեղեցու դռան մոտ գտնվող երեց-

¹³ Վ. վրդ. Տեր - Մինասյան. Անգիր դպրութիւն եւ առակք, Կ. Պոլիս, 1893, էջ 6:

¹⁴ Նույն տեղում, էջ 7:

փոխից եկեղեցու դռան բանալին: Աղվեսը գնալով տեսնում է, որ եկեղեցու դռանը մի մեծ գայլակեր շուն է քնած¹⁵:

Այս մի գրույցը էթե խորագրված էր «Աքաղաղ և աղվես», սպա անմիջապես նրան հաջորդող մյուս պատմությունը ունի «Աղվես և աքաղաղ» վերնագիրը: Այստեղ աղվեսը որպես թե հաշտության քարոզիչ դիմում է հավերին և աքլորներին, որ ծառից ներքև իջնեն: Եվ այս մարգարեության հետևողությամբ՝ թե վայրի գազաններն ու ընտանի կենդանիները միասին պետք է ապրեն, ասվում է, որ այսուհետև արջն ու եզները, գայլն ու գառը, կատուն ու մուկը, աղվեսն ու թռչունները միասին պետք է ապրեն, և որ իր ջերմ գիրկը բաց է հավերի առջև: Մինչ նա այսպես խոսում է, լսվում է շան հաչոցը, և աղվեսը պատրաստվում է փախչելու: Աքլորն ասում է, թե ուր էս շտապում վարդապետ, թող այստեղ գան բոլոր կենդանիները ու շները և միասին տոնենք «հաշտության մեր սուրբ օր»: Աղվեսն ասում է, թե հրովարտակ է մոռացել և պետք է գնա բերի:

Առակի բարոյական եզրահանգման մեջ, սակայն, աղվեսը ոչ թե ծաղրվում է, այլ հակառակը՝ թեկուզ և բացասական երանգով, սակայն նշվում է, որ խորամանկը միշտ էլ ելք է գտնում:

Խորամանկը առիթին հարմար

Կը գտնե ելք և հնար¹⁶:

Ջիվանու մշակման մեջ աղվեսը ներկայանում է որպես ուխտավոր և այստեղ, ի տարբերություն նախորդ մշակումների, խաբում է աղվեսին: Ընդ որում, գործողությունները զարգանում են ոչ թե ծառի վրա գտնվող աղվեսի շուրջը, այլ ունեն զարգացող սյուժե: Ասվում է, որ երբ աղվեսը ցանկանում է կեղծ բարեկամությամբ մոտենալ հավերին, աքլորը չի թողնում և իսկույն հավաքելով հավերին ապաստանում է հավանոցում:

Աղվեսն այնուհետև իրեն սև է ներկում և սզացող ճգնավոր ներկայանում: Հաջորդ առավոտյան, երբ աքլորը հավերի հետ դարձյալ դուրս է գնում գյուղից, տեսնում է սևավորված աղվեսին և հարցնում, թե ինչ է եղել: Աղվեսն ասում է, թե իր հին մեղքերն է ապաշխարում և սզավոր է, որովհետև Երուսաղեմ ուխտի է գնում: Աղվեսն ասում է.

Էլ ինձանից այսուհետև,

Ոչ ոքի վնաս չի հասնի,

Աստված տա քեզ երկար կյանք,

Աքլոր եղբայր, հանգիստ քնի¹⁷:

Ապա դիմում է աքլորին, թե ելնենք սարի լանջը, ուր հասած ցորենի արտեր կան: Աքլորը հավատում է նրան և գնում հետը: Այդ ժամանակ անձրև է սկսվում: Աղվեսն ասում է, թե մտիր այս ծակը, որ չթրջվես, որից հետո.

¹⁵ Ա. Ն ա լ բ ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 118–119:

¹⁶ Նույն տեղում, էջ 121:

¹⁷ Ա շ ու ղ Ջ ի վ ա ն ի. Անհայտ երգեր, էջ 337:

Անձրևը սաստիկ տեղաց,
Աղվեսին հաստատ լվաց,
Նախկին գույնը ստացավ,
Խեղճ աքլորը սարսուց:

Բանաստեղծությունն այստեղ, ասես, անավարտ է մնում, թեև մտքով հասկանալի է, թե ինչ է լինելու պատմության վախճանը: Անավարտության զգացումը ստեղծվում է, որովհետև չկա այս պատմությունը եզրափակող բարոյական եզրահանգումը: Ի տարբերություն մյուս հեղինակների գործերի՝ այստեղ աքլորին եղերական վախճան է վերապահված՝ համահունչ Ջիվանու այն ըմբռնմանը, թե կեղծավոր և ստոր մարդիկ կարողանում են հասնել իրենց նպատակին:

Խոտի դեզի վրա նստած մսակեր շան այլաբանական հին մոտիվը յուրովի է կիրառել Ջիվանին: Այս պատմությանը համահունչ ձևով ասում է, թե ինչպես անատամ հին գամփոք մսակեր չի թողնում, որ գառն ու հորթը խոտի դեզին մոտենան: Արձագանքելով այս պատմության տարբեր ենթատեքստերին՝ գամփոռի նման պահվածքը Ջիվանին հետևյալ ձևով է բացատրում.

Ինքը զրկվել է ամենայն բանից,
Կուզե, որ զրկվի ամեն արարած¹⁸:

Ամենայն հավանականությամբ, այս գործն ունի քաղաքական որոշակի ենթատեքստ և կապվում է ռուսական կայսրությունում այս բանաստեղծության գրության ժամանակ՝ 1901 թ., տիրող այն մտայնության հետ, թե ցարը լավն է, նրա կարգած պաշտոնյաներն են վատը, և այս մասին պետք է ասել ցարին: Մի մտայնություն, որը քիչ ժամանակ անց գնդակահարվելու էր արյունոտ կիրակիի ժամանակ:

Մինչ այդ, սակայն, Ջիվանին այստեղ գրում է, թե խեղճ գառն ու հորթը վախենում են, կարծելով, թե տերն է կամեցել, որ գամփոք լինի պահապան, որ «Ոչ ոք չձգտի մի փունջ խոտ ուտել»: Այնինչ խոտանոցի տերը, երբ այս մասին իմանում է, կրակելով սատկացնում է գամփոռին, որից հետո հորթն ու գառնուկը համարձակ ուտում են խոտը: Այսինքն՝ բարի տիրակալը պատժում է չար ծառային, պաշտոնյային:

Այսպիսով՝ Ջիվանին հայ միջնադարյան առակներին և նրանց ժողովրդական տարբերակներին դիմել է հետևյալ երկու պատճառներով: Առաջին՝ առավել ժողովրդական շունչ հաղորդելու իր երգերին, օգտագործելով և աշուղական բանաստեղծությանն այնքան համահունչ խրատական բարոյախոսությունը: Երկրորդ՝ առակը, անտիկ աշխարհից եկող ավանդույթով, որն այնուհետև առավել ցայտուն էր արտահայտվելու նոր շրջանի եվրոպական ու ռուսական գրականություններում, օգտագործվում է որպես քաղաքական այլաբանություն ժամանակի իշխողների դեմ:

¹⁸ Նույն տեղում, էջ 516:

БАСЕННЫЕ ОБРАБОТКИ ДЖИВАНИ

ТОВМАС ПОГОСЯН

Резюме

В ашугской литературе после темы любви следующее место занимает тема наставления. Назидательность в ашугском стихотворении особенно выражается использованием народных пословиц и басен как характерных примеров наставления. Эту традицию ашугской поэзии наиболее удачно использовал Дживани. В своих литературных обработках он сохранил главную черту басни—с помощью приведенного отдельного примера сделать соответствующий моральный вывод. При обработке басен Дживани максимально сокращает ход сюжета. В отдельных случаях он приводит сюжет в сплетении с моральным выводом.

ELABORATION OF FABLES BY JIVANI

TOVMAS POGHOSYAN

Summary

In ashoughs' literature, exhortations take the second place after love. Exhortations in ashoughs' poetry are expressed in folk proverbs and fables, as characteristic exhortative examples. This tradition of ashoughs' literature was largely used by Jivani. He kept the main characteristics of fables in his literary elaborations: to draw a respective moral conclusion through a separate example. By using fables Jivani possibly reduces the narrative process. In separate cases he presented the plot interwoven with the moral conclusion.